

15

ՏԵՏՐԱԿ

ԳՈՎԱՍԱՆԱՅ

Ի ՎԵՐԱՅ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ՈՒՒՏԱՏԵՂԵԱՑՆ ԳՐԻՍՏՈՍԻ



Ի ՏՊԵՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԱԲԵԱՆՅ
ՅԵՐՈՒՍԱԳԵՄ

1899

1087/1088

35363

Ա. Քր. լոբբակ
Պատկեր

Տ Ե Տ Ր Ա Կ

Գ Ո Վ Ա Ս Ա Ն Ա Ց

**Ի ՎԵՐԱՅ ՀԱՄՈՐԷՆ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ՈՒԽՏԱՏԵՂԵԱՅ**

**ՈՐԲ ԵՆ ՅԱՍՏՈՒԱԾԱՀՐԱՇ ԲԱՂԱԲՆ
ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ**

**Ի ԽՆԴՐՈՑ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԵՒ ԶԵՐՄԵՆՈՒՆԴ
ՈՒԽՏԱԻՈՐԱՅ**



**Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
ՅԵՐՈՒՍԱՂԷՄ**

1899

35363

Այցեացի լեզու իմ 'ի քիմս իմ , քե ոչ յիշեցից գրեզ ,
քե ոչ նախ նուագեցից գրեզ , Երուսաղիմ , սկիզբն
ուրախութեան իմոյ : Մայմ . ճԼԶ . 6 :



ՏԱՂ ԳՈՎԱՍՍԱՆԱՅ

Ի ՎԵՐԱՅ ՍՐԲՈՅ ՔԱՂԱՔԻՆ
ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ի ՅՈՐԴՈՐՈՒՄՆ ՈՒԻՏԱՓԱՓԱԳ ՀԱԻՏԱՑԵԼՈՅ



ԵՐԳ ԱՌԱՋԻՆ



ՌԷՄԼԷ քաղաք ծովուն մտիկ,
Երուսաղէմ խիտ գեղեցիկ
Անմահութեան բուրբ հոտիկ.
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
Երուսաղէմ է ծաղկեալ դաշտ,
Յորում բնակին շատ խաչապաշտք.
Տէր մեր քրիստոս ընդ մեզ է հաշտ.
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
Երուսաղէմ է սուրբ քաղաք,
Յամէն օր գոյ անդ Պատարագ,
Որոյ շորհն է մշտածագ.
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:
Երուսաղէմ յոյժ փառաւոր,
Յուխտ եկողաց գանձ հոգեւոր,
Մահտեսութեան անուն տայ նոր.
Եկայք ՚ի սուրբ Երուսաղէմ:

Երուսաղէմ վեց դուռ ունի,
 Մըտանողաց մեծ շնորհ ունի,
 Զի քաղաք Տեառն անուանի.
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Սուրբ Փրկիչն է բանտ քրիստոսի,
 Հրեշտակապետն 'ի նոյն կարգի.
 Սուրբ Յակովբ է վանք պանծալի.
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Յորդանան գետ մկրտութեան,
 Սուրբ Վերնատունն հաղորդութեան,
 Սուրբ Գողգոթայն խաչելութեան.
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Սուրբ Յարութիւն է բարձրաշէն,
 Յօրինուածն է գեղեցկօրէն,
 Բաղձան դիմել աշխարհ ամեն.
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Սուրբ Յակովբն է բարձր շինած,
 Աւագ խորանն ոսկեջրած,
 Պօղոս Պետրոս վերան դրած,
 Սուրբ Գլխադիրն յինքն է թաղած:

Գլխադիրն դուռն յորժամ բանան,
 Անդ մերձակայք փղձկին եւ լան,
 Հոգևով ցնծան ուրախանան.
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Ծունրը եգեալ զայն համբուրեն,
 Եւ խնդրուածք բազում առնեն,
 Յորդ արտասուօք զոգիս մաքրեն,
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Սուրբ Յակովբն է զարմանալի,
 Արեգական նման փայլի,
 Պարգեւ տուեալ Հայոց ազգի.
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Սուրբ Յակովբն է բազմասեղան,
 Վարդապետաց հանգիսարան,
 Քսան եւ հինգ ունի խորան.
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Սուրբ Վերնատունն երբ ոք հայի
 Սուրբ Նշանէն անդ զարհուրի,
 Յանոյշ հոտոյն յոյժ զմայլի.
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Սուրբ Յակովբն է գանձ բարելի,
 Բոլորն ամեն Եկեղեցի,
 Ուխտաւորաց Ուխտատեղի.
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Էջմիածինն յետոյ շինած,
 Սուրբ Սինա նոր խորան օծած
 Ի վերայ սուրբ երից վիմաց.
 Եկայք 'ի սուրբ Երուսաղէմ:

Նորոգ շինեալ կանանց տեղի,
 Որ Վերնատուն անուամբ կոչի.
 Երկու խորանք կան յայն վայրի.
 Ուր Պատարագ մատուցանի.

Յընթրեաց խորանն 'ի հինգ շաբթի՝
 Յաւագ աւուրս սուրբ շաբթի.
 Եւ 'ի միւսում սուրբ խորանի
 Ի սուրբ տօնին Վարդապետի:

Ի սէր քո սուրբ օրհնեալ Գլխին
 Երկու արքայք սիրով վառին ,
 Մեծըն Տրորդատ եւ Կոստանդին
 Սուրբ հաւատով առ քեզ եկին :
 Քրիստոս Աստուած Տէրն ամենին
 Ողորմելով գործոյս ձեռին ,
 Լսել տացէ ինձ ծառային՝
 Ե՛կ օրհնեալ ձայնն Աստուածային :
 Որ մեղաւոր եմ հողածին ,
 Գու ես իմ յոյս , Աստուածածին ,
 Բարեխօսեա՛ն առ Միածին
 Յիսուս որդիդ յաւուր մեծին :

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԳ

Ասացեալ բարառնաբար ՚ի վերայ փրկագործ
 Չարչարանաց տեղեացն Բրիստոսի :

Ի սուրբ երկիրն այն Աւետեաց
 Ժաման հասեալ Ուխտաւորաց ,
 Հարցաք զնա ուրախազգեաց
 Ո՛ւր է քաղաքն աննման ,
 Ո՛ւր է , ո՛ւր է յորում էր մեր
 Արքայն օծեալ :
 Չայնէր ձայնէր՝ զի՞ է , զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
 Պարեալ հոգւով անդ ցնծացաք ,
 Մարմնով զուարթուն ՚ի սէր անկաք ,

Երբ ՚ի սուրբ լեառն այն հասար .
 Ո՛ւր է տեղին բարձրացուցման ,
 Ո՛ւր է , ո՛ւր է յորս կայր մեր կեանք
 Անդէն կախեալ :
 Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
 Օրհնաբանեալ զմեր Արարիչ
 Ըզպարգեւացըն ընձեռիչ ,
 Երբ հայեցաք զայն կառափիչ .
 Ո՛ւր է սուրբ լեառնն Գողգոթայն ,
 Ո՛ւր է , ո՛ւր է յորում Յիսուս
 Կայր տարածեալ :
 Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
 Ղեկաբեկաւ սրտի մեր նաւ
 Յահէ փառաց նորին անբաւ ,
 Ուր խնդիր մեր յառաջ եղաւ .
 Ո՛ւր է վէմն այն պատառման ,
 Ո՛ւր է , ո՛ւր է յոր կայր անմեղ
 Գառնն զենեալ :
 Չայնէր ձայնէր՝ զի՞ է զի՞ է .
 Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :
 Որդւոց մարդկան սակրս մեղաց
 Ի խաչ ել անդ Տէրն փառաց ,
 Չայն վայր հարցաք արիւննաման՝
 Ո՛ւր է տեղին կողին խոցման ,
 Ո՛ւր է , ո՛ւր է յորում ջուր եւ
 Արիւն՝ բղխեալ :

Ձայնէր ձայնէր՝ զի՛ է զի՛ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Սարսափելիդ ՚ի Հրեշտակաց

Բարեբանեալ համայն յազանց ,

Ձքեղ աղաչեմք , ո՛վ Տէր գթած ,

Ո՛ւր է լեզին այն դառնութեան .

Ո՛ւր է , ո՛ւր է զոր ընկալար

Դու ծարաւեալ :

Ձայնէր ձայնէր՝ զի՛ է զի՛ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Վայ եւ եղուկ մերոց անձանց

Ձի մատնեցաք ըզքեղ մեղաց ,

Արդ ո՛չ ցաւեալ կրկին հարցաք ,

Ո՛ր այլ ցաւոցդ քո նման .

Ո՛ւր է , ո՛ւր է զոր կրեցեր

Դու խոնարհեալ :

Ձայնէր ձայնէր՝ զի՛ է զի՛ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Արդարութեան է նա աղբիւր ,

Դատապարտեալ կամաւրն իւր ,

Չարչարանօք որ անդ տանջիւր ,

Ո՛ւր է արիւնն սուրբ ուռգման .

Ո՛ւր է , ո՛ւր է սուրբ գլուխ փջօք

Իւր պսակեալ :

Ձայնէր ձայնէր՝ զի՛ է զի՛ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Բամից ստեղծողն դու էից

Հարեալ յեղեգրն յոյժ ձաղից ,

Որով հայցեմք զմուտ ելից ,

Ո՛ւր է տեղին զքեզ կատակման ,

Ո՛ւր է , ո՛ւր է յորս քանեցար

Անդ հայհոյեալ :

Ձայնէր ձայնէր՝ զի՛ է զի՛ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Դատեալ որպէս նա պարտաւոր՝

Բառնայր ՚ի յուս զփայտ ահաւոր ,

Ի բանտ մահու լեալ ուղեւոր .

Ո՛ւր է տեղին այն արգելման ,

Ո՛ւր է , ո՛ւր է յոր զԱդամայն

Ձպարտս քաւեալ :

Ձայնէր ձայնէր՝ զի՛ է զի՛ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Անպական իւր սուրբ մարմնով

Յոյժ վշտագնիւր նա տագնապով ,

Կրկին զխաչ բառնայր ուսով ,

Ո՛ւր է տեղին այն գլորման .

Ո՛ւր է , ո՛ւր է յոր կայր՝ Փրկիչ

Անդ մերկացեալ :

Ձայնէր ձայնէր՝ զի՛ է զի՛ է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Պարտաւորեալ հանդէպ խաչի

Երես անկեալ կամք առաջի ,

Եւ հարցանեմք զլոյսդ կենդանի .

Ո՛ւր է մուրհակ այն պատառման

Ո՛ւր է , ո՛ւր է զոր ջնջեցեր

Արեամբ սրբեալ :

Ձայներ ձայներ՝ զի է զի է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Երբ հաւանեալ նա պատեցաւ

Ի Յովսեփայ փառօք բարձաւ ,

Գանձըն կենաց անդ զմուեցաւ .

Ո՛ւր է տեղին այն պատանման .

Ո՛ւր է , ո՛ւր է յոր զծածկոյթ

Հնոյն էր զգեցեալ :

Ձայներ ձայներ՝ զի է զի է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Տարեալ եդաւ 'ի Գերեզման ,

Ի զինուորաց թողեալ պահպան ,

Ծածկեալ 'ի սիրտ երկրի մթան ,

Ո՛ւր է տեղին այն սուրբ թաղման ,

Ո՛ւր է , ո՛ւր է յորում էր գանձն

Անմահացեալ :

Ձայներ ձայներ՝ զի է զի է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :

Ինն որ յարեաւ շքեղ փառօք՝

Յարոց զբնութիւնն իւր սարօք .

Լցոց զմեզ իւր պարգեւօք .

Ո՛ւր է տեղին սուրբ Յարութեան ,

Ո՛ւր է , ո՛ւր է յոր կայր Հրեշտակ

Ջինջ լուսափայլ :

Ձայներ ձայներ՝ զի է զի է .

Եկայք տեսէք դուք զայն , օրհնեալք :



ԵՐԳ ԵՐՐՈՐԳ

Ի վերայ սրբոյ Երուսաղեմի եւ այլ սուրբ Տեղեաց :

Ի սեր հարեալ Աստուածակոխ

սուրբ քաղաքին ցանկալի ,

Յոր եւ յաւէտ կարօտութեամբ
անձն իմ հիւժի միշտ հալի .

Նորին տեսոյն սիրտ իմ բաղձմամբ
աչս արտասուօք լցեալ լի .

Դէպ 'ի յերկիրն սուրբ Աւետեաց
առներ տաներ հոյն զես :

Դէպ 'ի սուրբ վայրսն փրկական
փչէր տաներ հոյն զես՝ հոյն զես :

Նորին սիրոյն եւ տեսլենէն

չկարացի ես յագիլ ,

Ի հեռանալ եւս առաւել

ունիմ կարի բորբօքիլ :

Յոր վայր նստիմ ուր եւ լցեմ
չունիմ երբէք դադարիլ .

Դէպ 'ի քաղաքն աստուածակոխ
առներ տաներ հոյն զես .

Դէպ 'ի սուրբ վայրսն փրկական
փչէր տաներ հոյն զես՝ հոյն զես :

Օգտթուիչ թեւըս տայր ինձ

ամենազօր Փրկիչն իմ ,

Որ սլացեալ հասանէի

'ի սուրբ Տեղինսն ըզձագին .

Կրկին զիպեալ սուրբ վայելմանց
լինէի ես խնդագին .

Դէպ 'ի յերկիրն սուրբ Աւետեաց
առնէր տանէր հոյն զիս ,

Դէպ 'ի սուրբ վայրսն փրկական
փչէր տանէր հոյն զիս՝ հոյն զիս :

Տապիմ տենչմամբ մեծ Տաճարին
սուրբ Յարութեան մեր Փրկչին ,

Ուր կան տեղեր շնորհածիր ,
Գերեզման Տեառն արարչին .

Ժամերգողաց երգ քաղցրաձայն
միշտ յունկս իմ առ հնչին .

Դէպ 'ի Տաճարն սուրբ Յարութեան
առնէր տանէր հոյն զիս ,

Դէպ 'ի սուրբ վայրսն փրկական
փչէր տանէր հոյն զիս՝ հոյն զիս :

Անձկացեալ եմ այն Սրբազան
Տեղւոյն՝ որ կայ 'ի յԱյրին ,

Ուր Տէրն մեր Ծնեալ եղաւ
'ի լուսափայլ սուրբ Մարին .

Դասք Հրեշտակաց անդ պար առեալ
օրհնաբանիչ միշտ լինին .

Դէպ 'ի սուրբ վանսն Ծննդեան
առնէր տանէր հոյն զիս ,

Դէպ 'ի սուրբ վայրսն փրկական
փչէր տանէր հոյն զիս՝ հոյն զիս :

Րոտեալ ըզձիւ միշտ փափագիմ
ամենահրաշ տաճարին ,

Ամենօրհնեալ մօր Տեառն իմոյ
գերամաքուր սուրբ Շիրմին .

Ուր Սերովբէք եւ Քերովբէք
անտեսաբար գումարին .

Դէպ 'ի տապան սուրբ Տիրամօրն
առնէր տանէր հոյն զիս ,

Դէպ 'ի սուրբ վայրսն փրկական
փչէր տանէր հոյն զիս՝ հոյն զիս :

Եռանդագին եմ կարօտիւ
սուրբ Յակովբեանց մեծ Գահին ,

Ուր կայ տապան Տեառնեղբօր
ներքոյ Աւագ սեղանին :

Այլ եւ որդւոյն Զեբեդեայ
Գլխագիրն այն ցանկալին .

Դէպ 'ի յԱթոռն սուրբ Յակովբեանց
առնէր տանէր հոյն զիս ,

Դէպ 'ի սուրբ վայրսն փրկական
փչէր տանէր հոյն զիս՝ հոյն զիս :

Սիրով մեծաւ հեռուստ աստի
ծունր եւ համբոյր արդ ձօնեմ ,

Շնորհաբաշխ քարանց հողոյն
ըզդէմս իմ առփարեմ .

(Առ մեծ) Թուոյս կարօտակիր
Հէննէս զերգս յարմարեմ՝

Դէպ 'ի քաղաքն աստուածակոխ
առնէր տանէր հոյն զիս ,

Դէպ 'ի սուրբ վայրսն փրկական
փչէր տանէր հոյն զիս՝ հոյն զիս :

ԵՐԳ ՉՈՐՈՐԳ

Գովասանութիւն ՚ի վերայ սրբոյ Երուսաղեմի :

Յստուծոյ շինեալ քաղաք պատուական ,
Յանկալի զուարթնոց եւ որդւոց մարդկան .
Զքեզ նորոգեաց Դաւիթ մեծ արքայն ,
Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :

Անմահ արքային դու ես բնակարան ,
Որդւոցն Աստուծոյ վայր տնօրէնութեան .
Ազնիք ամենայն գալ առ քեզ ցանկան ,
Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :

Կամարին երկնից ես հանգուենական ,
Առ դիրս աստեղաց ՚ի հաստատութեան ,
Ընդ կենդանակերպսըն երկրոտասան ,
Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :

Որդւոցն Յակովբայ տուար սեփհական ,
Վիճակաւ անկար տոհմին Յուդայեան .
Քեզ շինեաց տաճար Սողոմոն արքայն ,
Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :

Բուրէ միշտ ՚ի քէն հոտ անմահութեան ,
Վարդի շուշանի խնկոց զանազան .
Կամ ազնիւ իւրոց նարդից բալասան ,
Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :

Քաղաք ես դու մեծ թագաւորական ,
Ի քեզ կառուցաւ նոր Սողոմոնեան ,
Աշխարհամատրան տաճար Յարութեան ,
Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :

Աղբիւր Սերվամ ջուր անմահութեան՝
Բիշեալ զովարար ծարաւ բընութեան .
Դու մեզ նոր Սիոն քրիստոնէութեան
Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :

Հաճեցաւ ՚ի քեզ Տէրըն վերնական ,
Վէմ ընտիր եղեալ ՚ի գրլուխ անկեան .
Զի ինքըն Քրիստոս ՚ի քեզ յարաժամ ,
Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :

Աստ եղէւ հոգւոյ փրկութիւն մարդկան ,
Որ ել իսկ ՚ի խաչ Տէր ՚ի Գողգոթայն .
Յանցանքն Ադամայ Եւայի թողան .
Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :


Նոր երկինք յերկրի հրաշափառական ,
Դու նոր արեւելք նոր արեգական .
Նորոգեալ ցնծան դասք քրիստոսական ,
Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :

Առ քեզ գանձ բազում հոգեւորական ,
Որով լիանան աշխարհ ամենայն .
Նախ եւ առաջին Տեառըն Գերեզման ,
Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :

Յոյժ անեղաբոց իջմամբ մեծաձայն
Պար առնեն մուսայք միշտ համանգամայն ,
Մեզ Քրիստոնէից լեր դու օգնական .
Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :

Է՛ Գեթսեմանի ձորն արբունական ,
Ուր Աստուածածնին դիրն է եւ տապան .
Անդ լինելոց է վերջին դատաստան .
Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :

ԵՐԳ ԵՏԵ



Ամենայն սրբոց ես ընդունարան ,
 Եւ մեղաւորաց մարդկան քաւարան .
 Ի քէն մտանեն 'ի յերկնից խորան ,
 Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :
 Սիրտ երկրի ես դու Տեառն տիրական՝
 Հանգոյն Աթոռոյն քերովբէական .
 Ոտից Արարչին եղեր պատուանդան ,
 Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :
 Արդ՝ չունիմ կարիք զոր քեզ է արժան
 Բարբառել բանիւք գովասանական .
 Կամ տաղիւ չափել երգ ներբողական ,
 Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :
 Յնծութիւն ես դու աշխարհի համայն ,
 Առաւել Հայոց ազգիս Արամեան ,
 Որք սերտ սիրով դիմեն առ քեզ գան .
 Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :
 Երեք տաճար են աստ հիացական ,
 Մեծի Յարութեան եւ սուրբ Մննդեան ,
 Եւ սուրբն Յակովբ փառաւորական .
 Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :
 Արքային երկնից բարեւի սեղան ,
 Խունկ եւ Պատարագ 'ի քեզ վերանան .
 Շնորհք սուրբ Հոգւոյն քեւ առ մեզ միշտ գան .
 Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :
 Լցեալ տօմարիս մեր Յարեթական՝
 Հազար եւ ութսուն թիւն էր 'ի լրման ,
 Յակովբէս այս երգ քեզ ընծայեցան .
 Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :

Էին անեղին՝ սուրբ Երրորդութեան
 Փառք եւ գոհութիւն միշտ եւ յաւիտեան
 Արա՛ զմեզ արժան քոյին տեսութեան ,
 Սուրբ Երուսաղէմ , քաղաք պատուական :
 Դասք երկնից զօրաց շուրջ գքեւ պարեն ,
 Ջխաչեալ Փրկիչն մեր օրհնաբանեն ,
 Որ եկն ազատեաց զմեզ գերողէն ,
 Սուրբ Երուսաղէմ , քաղաք աննման :
 Ո՛չ գոյ նման քեզ 'ի մէջ աշխարհի ,
 Որ յար նման ես վերին Միսնի .
 Արժան արա՛ , Տէր , տեսլեամք սուրբ երկրի
 Չաղգըս մեր համայն սիրով ըզձալի :





ԵՐԳ ՀԻՆՊԵՐՐՈՐԴ

Ի վերայ սրբոյ Գերեզմանին Քրիստոսի :

Իմոյ փրկչին սուրբ Գերեզման ,

Աննիրհ Տեառն դու բընարան .
Զուարթունն ձայնէր ուրախական՝
Քրիստոս յարեալ 'ի մեռելոց :

Նոր վիճափոր դիր հրաշական

Աստուածային մարմնոյն ննջման .
Զինուորքն եղէն զարհուրական .
Քրիստոս յարեալ 'ի մեռելոց :

Օթեալ 'ի քեզ լոյսն Էական

Յերիս շղան արեգական .
Ելմամբն 'ի քէն կնիք քո չեղձան .
Քրիստոս յարեալ 'ի մեռելոց :

Տարեալ 'ի քեզ զվէմն երկրալիր՝

Մագեաց 'ի սփիւռս լոյս երփնածիր ,
Կուամըլթեանց տայ ցան եւ ցիր .
Քրիստոս յարեալ 'ի մեռելոց :

Առիւծն Յուդայ այն Յակովբեան

Յառնէ 'ի քէն 'ի քնոյ ննջման ,
Կապտէ զկապուտն յաղթողական .
Քրիստոս յարեալ 'ի մեռելոց :

Րամբ Իւղարեր կանանց եկին ,

Զվէմն 'ի դրանց բարձեալ տեսին .
Զուարթնոյն լուեալ տարածեցին .
Քրիստոս յարեալ 'ի մեռելոց :

Էնն յարեալ նախ Մօրն երեւեալ ,

Մագդաղէնեոյն յետոյ յայտնեալ ,
Մետասանից ապա դիմեալ .
Քրիստոս յարեալ 'ի մեռելոց :

Սերալէն կայր առ դրան քոյին ,

Լուսափայլ էր նիստ 'ի վիմին .
Զայնիւ մեծաւ գոջէր ուժգին՝
Քրիստոս յարեալ 'ի մեռելոց :



ԵՐԳ ՎԵՅՆԵՐՐՈՐԳ

Գովասանութիւնն 'ի վերայ սրբոյ Գերեզմանին
Քրիստոսի :

Սուրբ Գերեզման յոյժ գովելի ,
Համայն ազանց ես ցանկալի .
Առ քեզ դիմեմք աղերսալի ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Աթու եղեր դու Արարչին ,
Հանգստարան անմահ Փրկչին .
Չարչարելոյն 'ի փայտ Խաչին ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Այն որ 'ի նմին ահեղ գոչեաց ,
Երեքօրեայ 'ի քեզ ննջեաց ,
Ինքն զարթեալ եւ զմեզ փրկեաց .
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Դու ես պարծանք քրիստոնէից .
Յոյս յարութեան մեզ համայնից .
Ըզքեզ Աստուած փառօք ելց ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Ի Սերովբէից օրհնաբանիս ,
Ի քրիստոնէից երկրպագիս .
Քան զարեգակն պայծառ փայլիս ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Լուսապայծառ սուրբ Գերեզման ,
Աստուածորդւոյն տեղի թաղման ,
Սնմահութեան հոտոյն բուրման ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Սուրբ եւ մաքուր Գերեզման կոյս ,
Քրիստոնէից պարծանք եւ յոյս .
Ի քէն բղխի միշտ պայծառ լոյս ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Յոյժ փափագիմք օրհնեալ տեսող ,
Եւ կարօտիմք քաղցրիկ գեղող ,
Երկրպագեմք քարիդ՝ հողող ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Արժանացո՛ք քում տեսութեան ,
Եւ բոց մեզ դուռն ողորմութեան .
Քանզի գին եմք անգին արեան ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Գերեզման ես լուսափայլեալ ,
Սքանչելափառ Տաճար կազմեալ .
Տեառն Աստուծոյ տուն անուանեալ ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

Սարսափելի ես Հրեշտակաց ,
Եւ սոսկալի հողեղինաց .
Դու յարկ եղեր Քանին կենաց ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Ի քիմն անոյշ հոտ ծաւալի ,
Ըզսեամբս քո համբուրողի .
Ձքեզ տեսողաց բիւր երանի ,
Լուսածաւալ սուրբ Գերեզման :

ՁԳերեզմանդ կնքեալ բանան ,
Եւ ցնծութեամբ անդր ընթանան .
Ձլոյս քո տեսեալ ուրախանան ,
Ո՛վ հրաշալի սուրբ Գերեզման :

Առ թողեալն 'ի քեզ մաղթեմք ,
 Արժանանալ տեսոյդ խնդրեմք .
 Նմա եւ քեզ երկրպագեմք .
 Լուսածաւալ սուրբ Գերեզման :



ԵՐԳ ԵՕԹՆԵՐՐՈՒԳ

Դարձեալ 'ի Յոյն՝ աղերսախառն :

Առ քեզ եկից սրտափափագ ,
 Զքեզ համբուրել տենչիւ անյագ .
 Զիս 'ի մեղաց փրկեան արագ ,
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման :

Ի մէջ մեղաց անկեալ գերի ,
 Յամեն կողմանց գտեալ թերի .
 Ողորմեան ինձ մեղաւորի ,
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման :

Ի դուռնորդ գամ թէպէտ լալով ,
 Բայց փառս տամ աղօթելով ,
 Լուսոյդ հոտոյն ըզմայելով ,
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման :

Բազումք ընդ իս ընթացակից ,
 Ես 'ի սէր քո յոտսրդ եկից ,
 Սրբիլ հոգւով երկրպագից ,
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման :

Կամաւ 'ի խաչ բեւեռելոյն ,
 Արիւնաներկ խոցեցելոյն ,

Փառօք 'ի քեզ թաղեցելոյն ,
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման :
 Զաշխարհ ամեն զուարթերես

Սիրով կապեալ յոտսրդ բերես ,
 Եւ համայնից նոցա ներես ,
 Մեղաց փրկող սուրբ Գերեզման :

Անմահ Փրկչին դու աննման
 Եղեր տեղե Մարմնոյն թաղման .
 Եւ 'ի Հօրէ լուսոյն ծագման
 Անուանեցար լյս Գերեզման :



ԵՐԳ ՈՒԹՆԵՐՐՈՒԳ

Ուղերձ մաղրանաց առ Ալիարհամատրան Տաճարն
 որ 'ի սուրբ Յարութեան :

Արփիահրաշ դու հարսնարան
 Կենարարին ,
 Երկինք յերկրի լուսափայլեալ
 գեր՝ քան զարփին .
 Մահու մարմնով ննջողն 'ի ծոց
 'ի քո շիրմին
 Յարեաւ փառօք , ձայներ զուարթունն՝
 ահա՛ տեղին ,

Մայր Տաճարաց, սուրբ Յարութիւն
 մեր հոգեծին ,
 Անմահութեան 'ի քէն պարգեւք
 մեզ ծագեցին .
 Առ ընդհանուր Եկեղեցիս
 ծագաց երկրին ,
 Բղևեցին գետք յորդախաղաց
 ջուր կենդանին :
 Քեզ յամենայն լեզուաց ազգաց
 անլռելին
 Միշտ օրհնաբան հոգեհուազ
 ձայնք աստ հնչին
 Քեւ արդ փառօք ցնծայ յաւէտ
 ազգ Հայկազնն .
 Ի նոր սեղան զենմամբ անմահ
 սրբոյ Գառին :
 Սրդ խոնարհեալ սրբոյ Տեղւոյս
 շնորհաց քոյին՝
 Փառս վեր երգեմք յարուցելոյ
 քեզ Անմահին .
 Երկրպագուացս՝ ուր կամք սրբոյ
 Գերեզմանին ,
 Տացես դասիլ անմահական
 քում վիճակին :
 Յողք անկեալ մաղթեմք զլոյսդ
 իմանալին ,
 Յերկնախումբ պար խառնեալ զմեզ
 տաճար վերին .

Բամեալքս աստէն 'ի միութիւն
 սրահի քոյին ,
 Գեղանշալ ըզմայլեսցուք
 յիսկականին :

ԵՐԿ ԻՆՆԵՐՐՈՐԿ
 Առ սուրբ Բանուն :

Քեզ Հօր լուսոյ երկնաւորի
 հոգւով բեկման՝
 Երկրպագեմք 'ի Տաճարիս
 այս սրբութեան .
 Ուր միածին Որդիդ եկեալ
 լոյսն անասման ,
 Վառեաց զէր ընդ Աստուծոյ
 եւ ընդ մարդկան :
 Աշխարհագոյժ այս վայր Փրկչին
 սրբաստման
 Եղեւ չորրորդ տեղի մթին
 բանտ արգելման .
 Ուր դա վերջին հասեալ վշտաց
 անարգական ,
 Յաղերս առ քեզ ձեռք մեր յերկինս
 աստ ամբառնան :
 Հան 'ի բանտէս , լյծ 'ի կապէս
 զամենեսեան ,

Ուղղեա՛ս գնալ զհետ Որդւոցդ
 միշտ անխափան .
 Հանգո՛ւ զհոգիս նախնեաց մերոց
 յերկնից խորան ,
 Պարիւլ ցնծալ ընդ Հրեշտակաց
 ՚ի յաւիտեան :

ԵՐԳ ՏԱՍՆԵՐՐՈՐԳ

Ի տեղին՝ ուր գնանդերման բաժանեցին .

Փրկիչ մեր եւ Տէր յաղթողն մահու
 տուիչն կենաց ,
 Գայ ՚ի մահ խաչի , տայ զարիւն իւր սուրբ
 ՚ի գին փրկանաց ,
 Այնմ՝ որ արկանէ որպէս ըզհանդերձ
 զլոյս անճառ փառաց ,
 Վիճակ արկանեն հանդերձի նորա
 դասքըն զինուորաց :
Որում վկայէ մեզ տեղիս այս սուրբ
 պաշտեալ Հրեշտակաց
 Ընդունելով միշտ երկրպագութիւն
 յիւրոց սիրողաց .
 Ուր այժմ՝ ՚ի թափօր պար առեալ շրջիմք
 ձայնիւ երգասաց ,
 Եւ աղաղակեմք ըւր Փրկիչ բարի
 մեր պաղատանաց :

Մերկեա՛ ՚ի մէնջ Տէր մերկութեամբ քոյին
 զգործ խաւարամած ,
 Եւ զգեցո՛ւ մեզ զէն արդարութեան
 զրահ անթափանց ,
 Փոխան հանդերձիդ՝ որ անհերձ մնաց
 վիճակ զինուորաց ,
Վիճակեա՛ ըզմեզ ՚ի քօ միութիւն
 յերկրին կենդանեաց :

ԵՐԳ ՄԵՏԱՍԱՆԵՐՐՈՐԳ

Ի վերայ սրբոյ Խաչին .

Միշտ որ ընդ Հօր՝ է նա պարզ մի ,
 Որ ընդ աջմէ նորին բազմի .
 Այսօր ում խաչ աթոռ կազմի ,
 Հանդչարան մի ոչ գտանի :
Շարակցեալ ընդ մարմնոց բաւի ,
 Որ բարձողն է մերոյս ցաւի .
 Իսկ այժմ՝ ՚ի խաչին ծարաւի ,
 Արբուցիչ մի ոչ գտանի :
Աղբիւր կենաց յորմէ հեղի
 Անգուլ ՚ի դասս մարդկան ցեղի ,
 Եւ ինքն ՚ի մէջ նեղաց նեղի ,
 Հանգուցիչ մի ոչ գտանի :
Կարդայ խաւ Հայր իւր սիրելի ,
 Զայն ածելով էլի ելի .
 Եղեւ մեռեալ եւ պատելի ,
 Ում պատող մի ոչ գտանի :

ԵՐԳ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՐՈՐԳ

Ի տեղևոջ Գիւտի սրբոյ Խաչին :

Մեծափափագ էին բաղձանք

Աստուածատէր սուրբ Դշխոյն ,
Մեծ Թագուհւոյն սուրբ Հեղինեայ
Առ գիւտ անգիւտ սրբոյ Խաչին :

Որ զծածկեալն հարուստ ամօք

Ընդ բազմակցոյ խերեւելին ,
Ոսկի արծաթ եւ մարգարիտ
Սփռեալ խնդրէր զբաղձալին :

Եւ մեր նորին շաւղաց կցորդ

Եկեալ հասաք 'ի նոյն տեղին .
Յածեալ ընդ ծով եւ ընդ ցամաք
Ի հեռաւոր ծագաց երկրին :

Փոխան ոսկոյ եւ արծաթոյ

Եւ բազմաթիւ այն մարգարտին ,
Զհաւատ , զլոյս , զտէր անկեղծ
Մատուցանեմք Կենարարին :

Զքեզ աղաչեմք՝ պահեա՛ն Փրկիչ

Ընդ հովանեաւ քո սուրբ Խաչին ,
Զջերմեռանդ զերկրպագուս
Եւ զազգս ողջոյն ուր եւ բնակին :

Փրկեա՛ն զնոսա չար յարկածից ,

Տո՛ւր քաւութիւն մեղաց նոցին ,
Ուրախացո՛ տեսութեամբ քով
Ի յերեւիլ սուրբ Նշանին :




ԵՐԳ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՐՈՐԳ

Առ Փառչ Պսակն :

Աթու շնորհաց աստուածաբարձ
Քառակերպեան կառաց քառակ ,
Թագաւորին քո պատմունձան
Ոչ բեհեղեայ գերփառունակ ,

Այլ հնատի քղամիդ կարմիր
Զգեցուցին առնել ծանակ .
Եւ բարձողին զփուշ մեղաց
Եղին 'ի գլուխ փշեայ պսակ :

Տուեալ զեղէգն յաջոյ ձեռին
 Փոխան ոսկոյ գաւազանին .
 Ի ծունր իջեալ բարբառէին՝
 Ող լեր , Արբայ , Հրէից ազգին :
 Մածկեալ զերեսըն տանջէին ,
 Զգլուին եղեգամբ հարկանէին .
 Եւ հանէին նմա ապտակ ,
 Եւ ո՞վ եհար՝ հարցանէին :
 Մեզ էր պատկան փշեայ պսակ
 Եւ գան մահու դառնագունին ,
 Զոր ընկալար Աստուած հրգոր ,
 Առ ՚ի փրկել զազգ մարդկային :
 Աստուածազարդ դու պսակեան
 Զմեր գլուխ շնորհօք քոյին .
 Մեր երեսաց ամօթ յետին ,
 Եւ քոյին փառք միշտ բարձրասցին :



ԵՐԳ ԶՈՐԵԲՏԱՍԱՆՆԵՐՐՈՐԳ
 Գովասանք ՚ի վերայ սուրբ Գողգոթային .

Սուրբ Գողգոթայն բարձր է շինեալ ,
 Պայծառափայլ է յօրինեալ ,
 Արիւնաներկ խաչ է կանգնեալ .
 Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :
 Սուրբ Գողգոթայն շնորհազեղ ,
 Բոլորովին է ուխտատեղ ,
 Հող եւ քարինքն են մեղաց դեղ .
 Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :
 Սուրբ Գողգոթայն մինչ շինեցին ,
 Կաթամբ զկիր շաղախեցին ,
 Զի ըզՏէր մեր անդ խաչեցին .
 Եկայք ելցուք ՚ի Գողգոթա :

Սուրբ Գողգոթայն է գեղեցիկ ,
Ի շրջապատն Եկեղեցիք .
Սուրբ զխաչն անդ պաշտեցիք .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա :

Սուրբ Գողգոթայն տեղ է լալոյ ,
Եւ զմեղս մեր քաւելոյ ,
Զդուռն երկնից առ բաղխելոյ .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա :

Սուրբ Գողգոթայն սարսափելի ,
Յոր աղօթելն ընդունելի ,
Դիւրին լինի անդ լսելի .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա :

Սուրբ Գողգոթայն ակնեղէն թագ ,
Տեսանողաց կրկնի փափագ ,
Աղօթս առնել անդէն անպագ .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա :

Սուրբ Գողգոթայն է սուրբ վայր մի ,
Համբուրողաց Տէրն ողորմի ,
Առ գտանել մեղաց ճար մի .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա :

Սուրբ Գողգոթայն է բարետուր ,
Զհայտըն 'ի վեր կալնու զարհուր ,
Միշտ հոտ անոյշ տայ քաղցրաբար .
Եկայք ելցուք 'ի Գողգոթա :

Սուրբ Գողգոթայն գերամբարձեալ ,
Յոր խաչեցաւ Փրկիչն օծեալ ,
Որ զՅովհաննէս փոխանակեալ ,
Որդի ետ մօրն ամենօրհնեալ :

Ի Գողգոթա տարածեցին ,
Զձեռս եւ զոտան ծակեցին ,
Զմայրիկն 'ի դէմն լացուցին ,
Զի սուրբ զսիրան խոցեցին :

Քրիստոս Աստուած մեր խաչեցաւ ,
Ի Գողգոթա բեւեռեցաւ ,
Յերեկն 'ի խոր գիշեր դարձաւ ,
Զի արեգակն խաւարեցաւ :

Յայնժամ սուրբ կոյնն Աստուածածին
Կայր առ Խաչի պատուանդանին
Փետէր թափէր զմազն 'ի գետին
Զի Միածինն էր 'ի Խաչին :

ԵՐԳ ՀՆԳԵՏԱՍՍԱՆԵՐՐՈՐԴ

Դարձեալ առ սուրբ Գողգոթա .

Դու Փրկիչ եւ յոյս մեր
ընդ այսբան խոնարհիս ,
Ի գազաթ այս լերին
մահապոյժ տարածիս .
Ո՛ւր քո դէմք լուսափայլ
երկնաւոր Արքայիս ,
Երկրաբարչ խոնարհեալ
ձով արեան ծածանիս :
Տագնապաւ դողացան
ընդ տեօիլ ահագին

Վերնային, լուսաւորք
 եւ երկիր ընդ նոսին .
 Ուր վասն իմ քառաթեւ
 տարածեալ 'ի խաչին .
 Բարձրացար 'ի տեղւոյ
 ետուր զքեզ առ իմ գին :

Տէր 'ի քո յայս բեմէս
 դարձ հայել սիրաբուն
 Առ փրկեալքս քո արեամբ
 առ սուրբ ուխտս այս ողջն .
 Յօղեսցին ցօղք շնորհաց
 'ի վերայ քոց 'ի նոյն ,
 Տացին մեզ կեանք անմահ
 յայս անպարտ քում մահուն :

ԵՐԳ ՎԵՇՏԱՍԱՆԵՐԲՈՐԳ

Առ սուրբ Պատանատեղին :

Յարեմաթեայ Յովսէփ արդար
 ի սուրբ խաչէն առ զՏէրն 'ի վայր ,
 Երեքսրբեան երգ խաչեցար
 Երգաբանէր մաղթողաբար :
 Հրաբորբօք խոցք բեւեռաց
 Հատանէին զչանթ կայծականց ,
 Որով բազմէր նորին բազկաց
 Վարդակարմիր արեամբ ներկած :

Ներկողեմոս անդ հանդերձէր
 Չմուռս, հարուէս, իւզս 'ի նուէր ,
 Դա որ մահու եւ կենաց տէր
 Աստ 'ի պատանս օծանէր :
 Պատարագէր յայս տեսարան
 Երանուհին մայր Մարիամ .
 Տարտամ մոռք յուշաթափման
 Էր իւր Որդւոյն 'ի յանդիման :



ԵՐԳ ԵՕՐԹՆԵՒՏԱՍՆԵՐՐՈՐԴ

ի վերայ սրբոց Յակովբեանց Տաճարին :

Համայն ազանց ես գովելի
 պայծառ Տաճար գեղեցիկ .
 Հիմնեալ յանուն Առաքելոց
 սուրբ Յակովբեանց երջանիկ .
 Շգեղապանձ ձեւով կանգնեալ ,
 չափիւղայ են քարքարինք .
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ո՛վ սուրբ Տաճար ցանկալի :
Են 'ի վերայ չորս սեանց ձգեալ
 ձեղունք ահեղ բարձրագոյն .
 Առ որս արկեալ Թեւոտարած
 ամուր կամարք լոյնագոյն .
 Յորոյ վերայ կայ հյսակապ
 գմբէթ քոյին մեծագոյն .
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ո՛վ սուրբ Տաճար ցանկալի :
Ներքոյ Աւագ սուրբ խորանիս
 կայ անգին գանձ պատուական ,
 Տեառննեղբօր սուրբ Յակովբայ
 մարմին եղեալ 'ի դամբան .
 Որոյ սուրբ գահն 'ի քեզ փայլի
 ըստ արեւու հրաշական .
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ո՛վ սուրբ Տաճար ցանկալի :

Նա եւ որդւոյն Զբերեալ
 առաքելոյն Յակովբայ
 Սուրբ Գլխոյն գիրքն գմբէթայարկ
 սեղան վերայ կազմեալ կայ .
 Որով երկու լուսաւորօք
 նման երկնից դու ցնծա՛ ,
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ո՛վ սուրբ Տաճար ցանկալի :
Ե եւ տապան սուրբ Մակարայ
 որ Գլխադրին մերձ փայլի .
 Մատուռն չքնաղ կից առ նմին
 սուրբ Մինասայ սուրբ Սարգսի .
 Տաճարք պայծառ Առաքելոց
 են վերամբարձ եւ սուրբ Խաչի .
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ո՛վ սուրբ Տաճար ցանկալի :
Ստեփաննոս , Էջմիածին
 տաճարք չգեղ հրաշազան ,
 Որք ընդ Թեւօք յաջ եւ յահեակ
 պարայածեալ շողողան .
 Վերնայարկիդ Պետրոս Պօղոս
 առաքելոց կան սեղան .
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ո՛վ սուրբ Տաճար ցանկալի :
Կայ 'ի ծոցի մետասանիդ
 սուրբ Թորոսի մեծ Տաճար ,
 Հոգւոյն Սրբոյ զատ այլ մատուռն
 ձգեալ բարձանց գեղապար .

Քսան եւ եօթն 'ի միջի քում
 խորանք պաշտին գերափառ ,
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ո՛վ սուրբ Տաճար ցանկալի :

Յաւելեայ յետոյ .

Ի սոցին փառս յաւել 'ի քեզ
 դար որ առ մեզ ոսկեղէն ,
 Հիմնադրութիւն քո վերնատան
 գաւթեան վերայ մեծաշէն .
 Լուսամտօք անդ եօթներումբ
 ճաճանչ պայծառ շողջողեն .
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ո՛վ սուրբ Տաճար ցանկալի :

Երգ մտղթանաց եօթնափառեան
 օրհներգութեանց աստ մատչին ,
 Ընդ անարիւն ձօն հաշտարար
 անմահ զենման սուրբ գառին .
 Պայծառազգեսցք եւ ծաղկասփիւռ
 թափօր 'ի պար բոլորին .
 Պարծանք մերոյ Հայոց ազգի ,
 ո՛վ սուրբ Տաճար ցանկալի :



ԵՐԳ ՈՒՌԵՆՏԱՍՅԵՐԻՈՐԳ

Դարձեայ պատմաբանօրէն 'ի վերայ Գլխադրի
 սրբոյն Յակովբայ :

Քրիստոսի սուրբ Գերեզման
 Միշտ կանթեղք քո են 'ի վառման
 Որք ուխտ դնեն եւ առ քեզ գան .
 Ամենեցուն լէր օգնական :

Սուրբ զՅակովբ գլխատեցին ,
 Նախ 'ի Սաղիմ ամփոփեցին ,
 Եկեղեցի հիմնարկեցին ,
 Սուրբ Գլխադիր անուանեցին :

Ապա Հրեշտակք անտի առին
 Զ'առանց գլխոյ նորին մարմին ,
 Հրամանաւն աստուածային
 Ի Սպանիա քաղաք տարին :

Եւ քաղաքն այն էր մերձ գետոյն ,
 Զմարմինն եզին յեզբ ջրոյն ,
 Ի յաղղմանէ Աստուած հոգւոյն
 Ընդ այգն եղեւ գալ ժողովոյն ,

Կաղբըն եւ կյրք միահաղոյն
 Եկին լուանիլ 'ի մէջ գետոյն ,
 Անդ պատահեալ նոյն սուրբ մարմնոյն
 Բժշկեցան յամեն ցաւոյն :

Ուրախութեամբ դարձեալ 'ի տուն
 Մեծ աւետիս մարդկան ետուն ,
 Յօր թէ ռամիկ թէ իմաստուն
 Զարմանալեօք լցան համբուն :

Խորհրդակցեալ ընդ արքային
 Ի գետըն յայն ջոկ ջոկ գային ,
 Տեսեալ զնա արտասուէին ,
 Անգլուխ Աստուած անուանէին :
 Բերեալ բեհեզ զայն պատեցին
 Եւ ՚ի քաղաք անդ հանգուցին ,
 Պատուեցին յոյժ եւ պաշտեցին
 Իբրեւ զԱստուած մեծացուցին :
 Մինչեւ սուրբն Պօղոս գնաց
 Քարողել անդ զԲանն կենաց ,
 Սպանիացուց զմիտս եբաց ,
 Դա մեր եղբայրն է մինչ ասաց ,
 Մորբուծիւնք նոցին բարձան ,
 Ի պաշտմանէ կուց դարձան ,
 Եւ Քրիստոսի հետեւեցան ,
 Արքայութեան արժանացան :



ԵՐԿ ԻՆՆԵԻՏԱՍՆԵՐՐՈՐԳ

Դարձեալ պատմաբար ՚ի վերայ սրբոյն Յակովբայ :

Առաքեալն սուրբ Յակովբ
 որդին սրտման ,
 Զոր կալեալ չարչարէր
 Հերովդէս արքայն :
 Եղեւ նա գլխատեալ
 յազգէն տիրասպան ,
 Զի՞ զբաժակն ըմպել
 Տեառն էր հրաման :
 Ընդ սուրբ կոյսն Տիրամօր
 առաքեալն Յովհան
 Մինչ կային վարանմամբ
 զՅակովբայն կալման .
 Հրեշտակն՝ բերեալ
 զգլուխն պատուական ,
 Եղ նոցա առաջի
 կոծով Թախծութեան :
 Զոր առեալ հանգուցին
 զգլուխն սրբազան
 Ի տեղւոջ պատշաճեալ ,
 զՏեառնէ գոհացան
 Ուր վանք մեծ շինեցաւ
 Թագաւորական ,
 Ի ձեռն կոստանդիու
 եւ մեր Տրդատայն :

Ընդ սուրբ Լուսաւորչին
 աղբիս Հայկազնեան ,
 էր սուրբն Սեղբեստրոս
 պապն Հռովմայն .
 Շինեցին յոյժ սիրով
 զտեղիս սրբութեան .
 Զտաճարն Յարութեան
 եւ զայլս ամենայն :
 Հաստատեալ մայր Աթոռ
 առաքելական
 Զտաճարն սուրբ Յակովբ
 Պատրիարքական ,
 Որ է վայր ցանկալի
 ազանց ամենայն ,
 Եւ աղբիս Արամեան
 պարգեւ սեպհական :
 Արդ է մեծ եւ պայծառ
 վանք երկնանման ,
 Գլխադիր սուրբ Յակովբ
 փառօք աննման ,
 Տուեալ տանս Թորգոմայ
 ընծայ յատկական ,
 Ուխտաւորաց բազմաց
 հանգիստ օթարան :
 Առ ոտս Յակովբայ
 գերահրաշ Ուխտին ,
 Գան յամեն կողմանց
 եւ անդ ժողովին .

Եւ առնեն բարեխօս
 զնա Արարչին ,
 Աղօթիւքն արժանի
 գօլ վերին Դրախտին :

ԵՐԳ ՔՍԱՆԵՐՐՈՒԳ

Գովասանօրին Ի վերայ քսան եւ հինգ խորանացն՝
 որ Ի սուրբ Յակովբայ վանսն .

Նախ եւ յառաջ զԱւագ խորան
 Առնուլ Ի գէպ է ինձ արժան ,
 Որ է պայծառ եւ աննման ,
 Ունի զտիպ արեգական :
 Եւ Ի ներքոյ սորին պանծայ
 Մարմին եղբօր Տեառն Յակովբայ ,
 Որ Ի Հրէից սպանաւ նա ,
 Ուր մինչեւ ցայժմ ամփոփեալ կայ :
 Յերկուս կողմանս սուրբ Սեղանին
 Երկու խորանք կան Ի կարգին ,
 Մինն է սրբոյ Աստուածածնին ,
 Իսկ միւսն սուրբ Կարապետին :
 Եւ Ի վերայ սոցին հիման
 Երկու փոքրիկ կան այլ խորան ,
 Սուրբ Պողոսի եւ Պետրոսի
 Առաքելոցն սրբազան :

Յահէկակողմն սոյն Տաճարի
 Գոյ սիրուն մի Եկեղեցի ,
 Յանուն սրբոյ Էջմիածնի ,
 Ուր կայ սեղան սուրբ Մինայի :
 Թէ 'ի դրան կողմն դարձցիս
 Եւ 'ի սանդղոց 'ի վեր ելցես ,
 Երկու խորանս այլ եւս տեսցես ,
 Եւ ջերմ սիրով համբուրեսցես :
 Մինն Ընթրեաց սուրբ Խորհրդին ,
 Այլափոխման է երկրորդին ,
 Նորոգ եղեւ շինուածք սոցին
 Նախ քան զձեփ սուրբ Տաճարին :
 Վերնատանէն 'ի վայր իջեալ ,
 Յաւանդատունն գնացեալ ,
 Ստեփաննոս է սա կոչեալ ,
 Որ 'ի սէր Տեառն նախ վկայեալ :
 Կրկին սեղան անդ ճոխ փայլե ,
 Մինն յանուն սուրբ Լուսաւորչի ,
 Եւ միւսն սուրբ Ստեփաննոսի ,
 Որք սիրելք են Քրիստոսի :
 Կայ անդ այլ եւ մեծ Աւազան
 Հայրապետի Կիւրղի անուան ,
 Կենաց փայտին 'ի յերեւման
 Երկու հազարք մկրտեցան :
 Ե՛լ դու աստի գալ 'ի կարգին ,
 Տես զսեղան սուրբ Գլխադրին ,
 Ուր ամփոփեալ է Գլուխ նորին ,
 Մեզ պարգեւեալ գանձ մեծագին :

Է մերձ սորա երկաթ դուռ մի
 Ուր կայ ազնիւ պահարան մի ,
 Եւ սուրբ Մինաս նա անուանի ,
 Որ յարաժամ փակեալ պահի :
 Ուր ոսկեղէն արծաթեղէն
 Խաչ եւ կանթեղք անօթեղէն ,
 Սրբոց մասունք բոլորն ամեն
 Մեծաւ խնամօք պահին անդէն :
 Գոն անդ եւ այլ երկու խորան
 Ազնիւ շքեղ եւ աննման ,
 Սրբոյն Սարգսի եւ Մինասայն
 Զօրավարաց մեծաց անուան :
 Կից սորա է եւ դամբարան
 Մաքուր տապան սուրբ Մակարայն ,
 Զի յԱթուռ յայտ նստաւ եւ այն ,
 Ասա ամփոփեալ յետ իւր մահուան :
 Ի վերայ սոցա սուրբ Խաչ շինեալ ,
 Կան այլ երկու մատրունք կազմեալ ,
 Աւաքելոց մինն անուանեալ ,
 Սուրբ Համբարձման միւսն կոչեալ :
 Գոն արտաքոյ սուրբ Տաճարի
 Եօթն սեղան յոյժ պանծալի ,
 Երկուքն 'ի մէջ գաւթին մեծի՝
 Սուրբ Նիկողեայ եւ Գէորգի :
 Զորսն 'ի մէջ սուրբ Թորոսի ,
 Որ է յատուկ Եկեղեցի .
 Շինեալ ազնիւ եւ գոլթել
 Զեռամբ Հեթում Թագաւորի :

Եւ 'ի տանիս սոյն Տաճարի
 Գոյ եւ փոքրիկ այլ մատուռ մի ,
 Որ Հոգին Սուրբ նա անուանի ,
 Անտի սուրբ Լեառնն տեսանի :
 Սոքա լիցին միշտ անխափան
 Մեզ օգնական եւ պահապան ,
 Որք թուեցան յայս երգարան
 Քսան եւ հինգ ահա խորան :



ԵՐԳ ՔՍԱՆԵՆՄԻՆՐՐՈՐԳ

Դարձեալ գովեստ 'ի վերայ սրբոյն Յակովբայ :


Ո՛վ սուրբ Յակովբ ամենօրհնեալ ,
 Սիրով Հոգւոյն դու առ լցեալ ,
 Զի սուրբ անունդ է հռչակեալ
 Բոլոր յաշխարհս տարածեալ :
 Ճեպեալ դիմեն վառեալ սիրով
 Ուխտաւորքն անհուն ծովով ,
 Տիւ եւ գիշեր արտասուելով
 Ի յօգնութիւն զքեզ կոչելով :
 Զի որք սիրով առ քեզ դիմեն
 Եւ արտասուք զկուրծս բողբոսն ,
 Փութով առնուն զոր ինչ խնդրեն
 Արեամբ ներկեալ քո սուրբ Գլխէն :

Արդ աղաչեմ բարեխօս լեր ,
 Մի դադարիր առ Հայր եւ Տէր ,
 Արագապէս օգնական լեր ,
 Ուխտաւորացն ընծայաբեր :
 Ուխտաւորքն երբ գան ժաման ,
 Զվիշտս բոլոր անդ մոռանան
 Ի մէջ գաւթին ճեմեալ ցնձան ,
 Հոգւով հրճուեալ ուրախանան :
 Երանի տամ փափագողաց ,
 Ուխտաւորաց այն եկողաց ,
 Զսուրբ Տեղիս համբուրողաց ,
 Նոցին զնորհս վայելողաց :



Ո՛վ ճանապարհ բարի Յիսուս ,
 Դուռն կենաց մտից ֆրիստոս ,
 Որք 'ի ծովու են կենցաղայս
 Զքեզ ունին միայնակ յոյս :
 Տէրունական Ուխտաւորաց
 Ի սուրբ Տեղիս քո դիմողաց ,
 Սիրով քոյին զմայրողաց
 Լեր ուղեկից յամեն դիմաց :
 Զհուր սիրոյդ յերկիր արկեր ,
 Գեղով սիրոյդ բորբոքեցեր ,
 Զտեղիս զայս զոր ընտրեցեր ,
 Սուրբ կարօտոյդ մեզ դեղ ցուցեր :

Սուրբ Յակովբայ բաժակարբուն
 Եւ Յակովբայ եղբօր քոյին ,
 Աղաչանօք Պետրոս վիմին
 Ուխտաւորաց տնօր հայցելին :
 Գերեզմանի քո համբուրման ,
 Գողգոթայի տեղւոյդ զենման ,
 Սուրբ Աթուոյ երկնանման
 Զամենեսեան արա՛ արժան :



ԵՐԳ ՔՍԱՆՆԻՆԵՐԿՈՒՆԵՐՐՈՐԳ

Դարձեալ 'ի վերայ սրբոյն Յակովբայ :

Ո՛վ իմ եղբարք յականջ առէք զիմ զբան ,
 Սուրբ Յակովբայ տաճարն է այս աննման .
 Սարսափելով մտի 'ի սուրբ Գերեզման ,
 Լալով Շիրմին համբուրեցի ես զբարն :
 Սուրբ Յարութիւն մեծ է եւ սուրբ Յակոբ դար ,
 Սողմոնի Տաճարն անտի դարու վար ,
 Ինքն 'ի տեղ բարձր եւ բոլորն նորին սար .
 Արե՛ք տեսէք զՔրիստոսի սուրբ եղբայրն :
 Ամիրայք եւ Պարոնայք դուք սու՛մ աստէն սպասէք ,
 Եկայք զվայրն զՔրիստոսին դուք տեսէք .
 Միցն հազար տայ՝ ձեզ՝ ընդէր անցոյս էք ,
 Մեզ բարեխօս լինի Աստուածամայրն :

Ի Գերեզմանն Աստուածածնի շատ լացի ,
 Զայս մտաց զգաստութեամբ անդ բացի .
 Ի Ղազարու գերեզման անդր գնացի ,
 Անտի ելի 'ի Համբարձման սուրբ լեռն :
 Սուրբ Համբարձման լերին մի կողմքն գեղ է ,
 Մեղաւորաց փրկիչ՝ Ը՛սխտից մեծ դեղ է .
 Եկայք տեսէք որպէս չքնաղ այն տեղ է ,
 Զի սուրբ Սաղիմ՝ գեղեցիկ Ուխտատեղ է :



ԵՐԳ ՔՍԱՆՆԻՆԵՐԿՈՒՆԵՐՐՈՐԳ

Ի վերայ վանուց սուրբ Հրեշտակապետի :

Դրախտ տնկախիտ
 'ի մէջ քաղաքին ,
 Սուրբ Հրեշտակապետ
 նախկին բանտ Փրկչին .
 Աստ ներկայացաւ
 'ի դատ Աննային ,
 Ուր 'եւ կապեցաւ
 'ի ծառ ձիթենին :
 Հրեշտակք ահաբեկ
 նորին ձաղանաց ,
 կային սասանեալ
 շուք եղեալ փառաց :

Անդանօր մի ոմն
 'ի սպասաւորաց ,
 Տայր նմա ապտակ
 լինէր դիմադարձ :
 Կուսանք սրբանուէր
 կան 'ի պաշտաման ,
 Քաղաքացւոց այս
 Տաճար սրբազան .
 Տեղի շնորհաց ,
 մեղաց քաւարան ,
 Մի միայն պարծանք
 Ազգիս Արամեան :



ԵՐԳ ՔՍԱՆՆԻՉՈՐՐՈՐԳ

Ի վերայ վանուց սուրբ Փրկչին :

Երկրորդ բանտ Փրկչին
 մերձ սուրբ Սիովնի ,
 կանխաւ տունն աստ լեալ
 կայխափային .
 Երկրպագելի
 փոշի սուրբ Երկրին ,
 Ուր թուք եւ ապտակ
 տուան իմ Փրկչին :

Անդ հարցեալ Պետրոս
 Երիցս գայր յուրատտ ,
 Հաւուն խօսելայ
 գայր անդրէն յիմաստ .
 Յակնարկել Փրկչին
 բան տայր նմա ազգ ,
 Յարեան արտասուաց
 մտանէր դարաստ :
 Կանգնեալ 'ի տեղոյ
 Տաճար սրբազան .
 Կափարիչ սուրբ Վէմն
 կազմեալ անդ Սեղան ,
 Յերկրպագութիւն
 անդ հանդիսանան ,
 Ազգաց եւ ազանց
 ժողով Տէրունեան :



ԵՐԳ ՔՍԱՆՆԻՉԻՆՊԵՐՐՈՐԳ

Դարձեալ 'ի վերայ սուրբ Փրկչայվանաց :

Միտ դիք ինձ որ գովեմ զԱմենափրկիչ ,
 կենդանեաց մեռելոց կեցուցիչ Փրկիչ ,
 Ախտաժէտաց բըծիչ , դիւաց հաւածիչ ,
 Յիմարաց տգիտաց ուսուցիչ Փրկիչ :

Ի Բրիտոսի Շիրմէն յայն վայրն բերին ,
 Ի ներքոյ խորանին զմեծ Վէմն եզին ,
 Չորս կողմն բաց թողին պատուական քարին .
 Պէսպէս մեղաց չարեաց ողորտիչ Փրկիչ :

Ամեն սուրբ Տեղին խորհրդական է ,
 Բոլորն ամեն սուրբ Աղօթարան է ,
 Նորաչէն սենեակքն յոյժ պատուական է .
 Գիւհարաց ախտից փարատիչ Փրկիչ :

Մի կողմն սուրբ Փրկչին՝ մեռելոց թաղ է .
 Միւս կողմն սուրբ Սինն այլազգեաց տեղ է ,
 Եւ այլքն ձիթենեաց պարտէզ այգի է ,
 Յոյս մեղաւորաց է , եւ բաւիչ Փրկիչ :



ԵՐԳ ԳՍԱՆՆԻՎԵՑՆԵՐՈՐԳ

Ի վերայ սրբոյ Բերեմեմի :

Վասն իմ՝ մանկացեալ
 Փրկչիդ բոլորից ,
 Սահմանք եբրաթայ
 Տագման քո ելից ,
 Ուր ծնար անախտ
 օտար մեր կրից ,
 Ի բազուկ կուսին
 գգուեալ գրկալից :

Գեզ Աստուածորդւոյդ
 Մտւր անբանից ,
 Տայ նինջ քնաբեր
 Ի վերայ յարդից :

Եւ ջամբ խանդակաթ
կաթն ստեանց կուսից ,
Սնկարօտ բնութեան
արդ մեզ համակից :

Ուր հովիւք եղեն
փառաբանակից ,
Երկնապար զուարթնոց
իջեալ 'ի յերկնից ,
Որոց գունդագունդ
էջք 'ի յեթերից ,
Մարդկան նշանակ
եղեն վերելից :

Փառք քեզ 'ի բարձունս
հոգևով ցնծալից ,
Աստ մատուցանեմք
անմահ արքայիդ .
Որ 'ի Նազարէթ
փթթեալ ծաղկալից ,
Աստ պտղովք 'ի լի
բուրես հոտ վարդից :

Եւ քեզ ընծայեմք
ընդ Մոգուց ելից
Զերկրպագութիւն
Արարչիդ բնաւից .
Ա՛ռ ընկալ 'ի մէնջ
ընդ կուսին անբիծ ,
Զաղերս մաղթանաց
տէրունեան ուխտից :



ԵՐԳ ՔՍԱՆԵԻԾՈՐՆԵՐԲՈՐԴ

Առ սրբամարտի տապան Աստուածածնին :

Ամենօրհնեալ Մարիամ
Մայր Տեառն իմոյ տիրածին ,
Հասարակաց ննջեաց քուն
Ի լեառն սուրբ Սիօնին :
Ուր Միածին Բանն Աստուած
Հրեշտակօք լուսարփին ,
Գայ իջանէ յաւանդումն
Հոգւոյն յերկրէ 'ի յերկին :

Համագումար 'ի ծագաց

Սուրբ Առաքեալք 'ի տեղին ,
Համակին անդ սուրբ տենչիւ
Մեծ տրամուլթեան եւ խնդին :

Լուսապատար Զահագգեաց

Եւ սուրբ կուսանք ընդ նոսին ,
Բարձեալ զգագաղ Տիրամօր
Գէթսեմանեան տան շիրմին :

Օթեալ եղեւ անդանօր

Յերիս շրջան արեգին ,
Բարթողիմեայ յետագայ
Բանի տապանն տարփագին :

Տեսին ունայն զտեղին

Եւ գերեզման առանձին ,
Քաջ նմանեալ իւր Որդւոյն
Յարուցելոյ Միածնին :

Ընդ ամպածեմն սաւառնի ,

Ընդ օդ թեթեւ վերնային ,
Գունդք անմահից զուարթնոց
Յողջոյն խառնին սուրբ կուսին :

Գերակայից բարձրացեալ

Յեթերս 'ի վեր սէրարփին ,
Բարեբանի օրհնութեամբ
Մաքուր Տաճար Անեղին :

Մաղթեմք 'ի ձօն օրհնութեան

Քեզ , Տիրուհւոյդ մօր Բանին ,
Հայեանց 'ի յեղ 'ի բարձանց
Յայս մեր ժողով սուրբ Ուխտին :

Ուր յերկրաքարչ աստ սահմբ

Համատագնապք 'ի վշտին .
Յերկնաջու քոյ պողոտայն
Մի ոտք մեր անդ գթեսցին :



ԵՐԳ ԲՍԱՆԵՆՈՒԹԵՐՐՈՐԳ

Ի վերայ լերին սրբոյ Համբարձման :

Ի լրանալ տանեակ քառից

Աւուրց սրբոյ Յարութեան ,
Եւ Տէրն 'ի լեառն Զիթենեաց
Առաքելովք սրբազան .

Ուր զառաջին եւ զվերջին

Հրամանաց իւր տայր պատուէր ,
Թագաւորաց եւ աշխարհի
Առնէր զնոսա քաջալեր :

Միով հոգւով յոսկիածոյլ

Յօգէ յանլոյծ 'ի շղթայ .

Ի Սաղիմեան նստեալ դադար
Յերկնից զՀոգին խոստանայ :

Ամպախաղաց վերասլանայ

Ընդ օդ թեթեւ լուսազգեաց ,
Որով դրանդիք երկնից բացան
Վերեւ մարդկան տալ յԱստուած :

Ուր զուարթնոց իջեալ յերկնից

Առաքելոց տան խրախոյս ,

Դոյն օրինակ իջանելոյն
 Կանխաւ լինին քաջայոյս :
Հաւատացեալք անդ խաչակրօն
 Լուսով փայլին վառ 'ի վառ ,
 Մեղսասիրաց անհաւատից
 Լիցի դատիլ անաչառ :
Արդ խոնարհեալ յայս սուրբ լերին
 Աստուածորդւոյդ Համբարձման ,
 Մաղթեմք յերկնից զամենազօր
 ԶՀոգիդ սուրբ տալ մեզ օձան :
Յանկից վերաց քոց հնգեցունց
 Մեզ կեսնք ծաւալ ցոլացին ,
 Յաւերժական լուսով փառաց
 Յաջեան քօ կալ 'ի դասին :

ԵՐԳ ԲՍԱՆԵԻԻՆԵՆԵՐԻՈՐԳ

Ի վերայ Տնօրեհոսքեան Քրիստոսի :

Տերըդ սիրով խոնարհեցար ,
 Յարգանդ կուսին բնակեցար ,
 ԶԱղամային մօրմին զգեցար ,
 Եւ աշխարհի լոյս ծագեցար :
Ի յանարատ կուսէն ծնար ,
 Ի խանձարուրս պատեցար ,
 Ի յանբանից Մսուր եգար ,
 Եւ 'ի Մոգուցն պատուեցար :

Քառանօրեայ ընծայեցար
 Ըստ օրինաց դու 'ի Տաճար ,
 Փակեալ դրան բացող ցուցար ,
 Ի Ծերունւոյն անդ գգուեցար :
Ի Յորդանան մկրտեցար ,
 ՅԱստուած Հօրէդ վկայեցար ,
 Ի Յովհաննէ քարոզեցար ,
 Գառն Աստուծոյ անուանեցար :
Ի Վերնատունն բազմեալ եղեր ,
 Զահեղ խորհուրդն աւանդեցեր ,
 Զաշակերտացդ զոտս լուացեր ,
 Խոնարհութեան վարս ուսուցեր :
Ի Յուդայէ համբուրեցար ,
 Ի ծառայէ ապտակեցար ,
 Ի չար Հրէից նախատեցար ,
 Կամաւ 'ի Խաչ դու բարձրացար :
Ընդ անօրէնս համարեցար ,
 Արբեր լեղի եւ դառնացար ,
 Ուր կենդանիդ անշնչացար ,
 Մուր գեղարդեամբն խոցեցար :
Ի Յովսեփայ դու պատեցար ,
 Ի Գերեզման կոյս թաղեցար ,
 Եւ մատանեաւ անդ կնքեցար ,
 Ի զինուորաց պահպանեցար :
Ի դժոխս իջեալ աւերեցեր ,
 ԶԱղամ զծնողն աղատեցեր ,
 Զարքայութեան դուռն բացեր ,
 Եւ մեզ ձրի պարգեւեցեր :

Ի սուրբ Շիրմէն փառօք յարեար ,
Բազմաց յայտնի երեւեցար ,
Ընդ աշակերտսն բազմեցար ,
Յորժամ փակեալ դրօք ցուցար :

Ի Գալիլեա ապա գնացեր ,
Անդ զԱռաքեալսն օրհնեցեր ,
Ի հեթանոսս առաքեցեր ,
Եւ քարոզել պատուիրեցեր :

Յերուսաղէմ կալ սացեր ,
ԶԱստուած հոգին աւանդեցեր ,
Նովաւ լեզուս բաժանեցեր ,
Եւ սուրբ շնորհօք զարդարեցեր :

Ի Ձիթենեաց լերին գտար ,
Յորմէ փառօք վեր համբարձար ,
Գասուց վերնոց ահեղ ցուցար ,
Եւ ընդ ալմէ Հօր բազմեցար :

Ո՛վ տէր Յիսուս Աստուած եւ բան ,
Կրեցեր կամաւ զայս ամենայն ,
Շնորհիւ քո սուրբ Տնօրէնութեան ,
Արժանացի՛ քոյդ տեսութեան :

ԵՐՓ ԵՐԵՍՆԵՐՐՈՐԳ

Ի վերայ սրբոյ Յարութեան Քրիստոսի :

Գահութիւն մեծ տեառն Արարչին
Եւ Քրիստոսի հանուրց փրկչին ,
Որ 'ի ձեռն իւրոց խաչին
Յարոյց ընդ իւր զմարդն առաջին :

Այսօր յարեաւ 'ի մեռելոց ,
Լոյս ծագեցաւ արարածոց ,
Զհոգիս փրկեաց 'ի դժոխոց .
Աւետիս տամ ազգիս Հայոց :

Լուսաւորեաց զոգիս մարդկան ,
Սուրբ Յարութեամբն պատուական ,
Զմարմինն ետ մեզ անապական ,
Եւ սուրբ զարիւն իւր փրկական :

Ուրախութեամբ ճաշակեսցուք ,
Եւ սրբութեամբ հաղորդեսցուք ,
Զի 'ի մեղաց սրբեալ լիցուք ,
Յանմահութիւն փոխարկեսցուք :

Իիւսեալ 'ի մի փառատրեսցուք ,
Ըզյարուցեալն գովեսցուք .
Զլոյս Գերեզմանն համբուրեսցուք ,
Եւ զՅարութիւնն պատուեսցուք :

Սուրբ քաղաքն Երուսաղէմ ,
Ընդ որ եւ սուրբն Բեթլէհէմ ,
Որք հաւատոյս մեր եղեն վէմ ,
Մարտիոց ամուր դիւաց ընդդէմ :

Տիրամօր սուրբ Աստուածածնին
Ուրախութիւն ետ իւր Որդին ,
Եւ ողբ այսօր սգաւորին ,
Սաղայելի դասուն կարգին :



ԵՐԳ ԵՐԵՍՆԵՒՄԻԵՐՐՈՐԳ

ի վերայ սրբոյ կարապետին :

Կանանցածին չէ յարուցեալ

Մեծ քան զքեզ այր զօրացեալ
ի տեառնէ է այս ծանուցեալ,
Խնդրակատար սուրբ կարապետ :

Գայր կոյսն առ մայր քո յղացեալ,

Դու յարգանդին զայն իմացեալ,
Երկիր պագեր անդ խողացեալ,
Բանին սատար սուրբ կարապետ :

Չաբարիա հայրդ համբացեալ,

ի քում ծննդեան բերան բացեալ,
Չանունդ Յովհաննէս կարդացեալ,
Շնորհապատար սուրբ կարապետ :

Ընդ մէջ կապեալ մաշկեայ գօտի
Բնակեցար յանապատի,
Եւ Հրեշտակաց դու հաւաստի՝
Նմանեցար սուրբ կարապետ :

Դու արուսեակ ծագման Արփւոյն,
Ընդունարան շնորհաց Հոգւոյն,
Որ Մկրտիչ Աստուածորդւոյն
Ընտրեալ գտար սուրբ կարապետ :

Չեռամբդ առեալ զուր գետոյն
Լցեր վերայ օրհնեալ Գլխոյն,
Եւ ձայնի Հօր վկայելոյն
Արժանացար սուրբ կարապետ :

Չայն բարբառոյ մականուանեալ,
Ճշմարտութեան միշտ հաւանեալ,
ՉՀերովդէս յանդիմանեալ,
Գլխատեցար սուրբ կարապետ :

Եւ 'ի դժոխսն քարոզեցեր,
Տեառն զգալուստ աւետեցեր,
Որով զտրտմեալս բերկրեցուցեր,
Ուրախարար սուրբ կարապետ :

Գովելի ես դու զանազան,
Կենաց մերոց ես գաւազան,
Քրիստոնէից լեր աւազան,
Ո՛վ սրբարար սուրբ կարապետ :

Առաքելոց, Մարգարէից,
Մարտիրոսաց, Քահանայից,
Ճգնաւորաց սրբոց հանրից
Մեծ կոչեցար սուրբ կարապետ :

Քո աղօթքն է ընդունարան ,
 Բարեխօսեան վասրն մարդկան ,
 Որ անուանիս « Մշու Սուլբան » ,
 Հոգեպարար սուրբ կարապետ :



ԵՐԳ ԵՐԵՍՆԵՐԿՈՒԵՐՐՈՐԳ

Գովասանուքիւն 'ի վերայ բարեկամին Քրիստոսի՝
 սրբոյն Ղազարու :

Ի սկզբանէ Բանն Աստուծոյ
 Եղև մարմին՝ առ փրկելոյ
 Զհոգածին բնութիւն մարդոյ ,
 Եւ 'ի մեղաց ազատելոյ :

Ղամբար լուսոյ արդարութեան ,
 Ղազար քարոզ ճշմարտութեան ,
 Որ ցուցար մեզ դուռն յարութեան ,
 Եւ ճանապարհ արքայութեան :

Աւրի Ղազար իմ սիրական ,
 Ե՛կ մի մնար 'ի գերեզման ,
 Տէրն կոչեաց եւ զքեզ հան
 Ի դժոխոցն անդնդական :

Զուարթնոց նման ազնիւ Ղազար ,
 Սուրբ եւ անմեղ մաքուր արդար ,
